

XVII ԴԱՐԻ ՕՍՄԱՆՅԱՆ ԵՐԳԻԾԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ
(ՕՄԵՐ ՆԵՖԻԻ «ՃԱԿԱՏԱԳՐԻ ՆԵՏԵՐԸ» ԺՈՂՈՎԱԾՈՒՆ)

Թուրք գրականության պատմության մեջ 17-րդ դարն ընդունված է համարել երգիծանքի⁶¹⁸ դարաշրջան. ինչպես նշում է ռուս հայտնի արևելագետ Վ. Սմիրնովը. «17-րդ դարի թուրք գրականությունը նշանավորվում է իբրև երգիծական պոեզիայի գերիշխանության դարաշրջան⁶¹⁹»: Թուրք գրականության վաղ փուլում երգիծանքը շարունակում էր մնալ «դասական» հաջվի⁶²⁰ ձևերի մեջ, որը թափանցել էր արաբական մշակույթի, ինչպես նաև պարսկալեզու խոսքարվեստի միջոցով: Հաջվի՝ իբրև անձնական թշնամու հասցեին արտահայտված սուր հարձակման ավանդույթները փոփոխվեցին բավական ուշ, և գրողները սկսեցին անդրադառնալ առավել բարդ, սոցիալական նշանակություն ունեցող խնդիրների:

16-րդ դարի 2-րդ կեսի և հատկապես 17-րդ դարի հասարակական պայմանների զարգացմանը զուգընթաց՝ թուրք գրականության մեջ ևս տեղի են ունենում բովանդակային որոշակի փոփոխությունները⁶²¹: Այս շրջանում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող արտաքին և ներքին տարաբնույթ զարգացումները ի հայտ բերեցին հասարակական մտքի զարգացման և գրականության մեջ նոր տրամադրությունների, գաղափարների առաջացման միտումներ: Պոետներն իրենց ստեղծագործություններում երգիծանքին հատուկ մեթոդներով սկսեցին ավելի հաճախ սուր քննադատության ենթարկել կոնկրետ անձանց և երևույթները:

Գրականության նախորդ փուլը յուրօրինակ հող նախապատրաստեց երգիծանքի ժանրի վերելքի համար. ավելի ցայտուն սկսեց ի հայտ գալ քննադատական

⁶¹⁸ Թուրքական գրականության մեջ երգիծանք իմաստն արտահայտող մի շարք բառեր կան՝ *շաքա, ալայ, ֆիքրա, լյատիֆե, նոքթե, միզահ, հեջվիյե, հիջիվ, գևքիյաթ, մութայերաթ*, որոնք թարգմանվում են որպես *կատակ, հեզնանք, անեկրոտ, հումորեսկ, հումորային պատմվածք, երգիծանք, ծաղրանք* և այլն: Այս մասին ավելի մանրամասն տես Маштакова Е., Из истории сатиры и юмора в турецкой литературе (XIV-XVII вв.), Москва, 1972, стр. 5-7:

⁶¹⁹ Смирнов В., Очерк истории турецкой литературы - Всеобщая история литературы, под ред. В. Корша и А. Кирпичникова, т. 4, СПб., 1891, стр. 483.

⁶²⁰ Արաբների նախախլամական բանավոր պոեզիայում գոյություն ունեւր ցեղի թշնամիներին կամ բանաստեղծի անձնական թշնամուն զրպարտելու հատուկ ձև ու արդեն տոհմացեղային հարաբերություններում *հաջվը* սկսեց անարգանք արտահայտել: Հաջվի ավանդույթները բանաստեղծության մեջ թույլատրելի էին համարում ցանկացած չարաշահում, որոնցով հեղինակը ցանկանում էր իր անարգանքն արտահայտել հակառակորդի նկատմամբ: Պոետի կողմից չարաշահումն ընդունելի էր, միայն թե այն ճիշտ հանգավորված և սրամիտ լիներ: Այս մասին մանրամասն տես Бертельс Е., История персидско-таджикской литературы - Избранные труды, т. 1, Москва, 1960, сс. 127, 441:

⁶²¹ Стен Моллов Р., О некоторых ренессанских тенденциях в турецкой литературе - Теоретические проблемы восточных литератур, Москва, 1969, стр. 100-107.

ուղղվածությունը: 16-րդ դարում իր գավթողական քաղաքականության գագաթնակետին հասած Օսմանյան կայսրությունը արդեն 17-րդ դարում արտաքին պատերազմներում ոչ միայն չկարողացավ հասնել նախկին հաջողություններին, այլև բախվեց պարտության՝ մեկը մյուսի ետևից կորցնելով նախկինում գրաված տարածքները: Ռազմական անհաջողությունները առաջ բերեցին տնտեսական բնույթի մի շարք խնդիրներ, որոնք զգացվում էին կայսրության տարբեր խավերի մոտ: Այս ամենը պատճառ դարձան նաև բողոքի զանգվածային միջոցառումների և ապստամբությունների, որոնց ճնշումն իշխանություններից պահանջում էր մեծ ռեսուրսների և ժամանակի վատնում:

Սակայն վերոնշյալ դեպքերը չկարողացան ազդել գրականության զարգացման վրա, այլ ընդհակառակը՝ ի հայտ եկան նոր ուղղվածություններ և թեմատիկաներ: Մասնավորապես՝ առավել ակտիվացան երգիծական մոտիվներով ստեղծագործությունները, որոնք նկարագրում և ծաղրանքի միջոցով քննադատում էին երկրում տիրող իրավիճակը, իշխանությունների ապաշնորհությունը և այլն:

Թուրքական գրականության մեջ երգիծանքի ժանրի հիմնադիրն է համարվում Շեյխին⁶²², սակայն երգիծանքն իր առավել զարգացման փուլին հասավ օսմանյան միջնադարյան գրականության կարկառուն ներկայացուցիչ Օմեր Նեֆիի (1582-1635թթ.) ստեղծագործություններում: Նեֆին՝ լինելով պալատական պաշտոնյա, ականատեսն էր սուլթանական պալատի ներսում տիրող իրավիճակին, ֆեոդալների, մեծ վեզիրների կողմից իրականացվող կամայականություններին, ինչն էլ պոետին հնարավորություն տվեց երգիծանքի միջոցով դիմակազերծել պալատական կյանքում արմատավորված հոռի բարքերը: Օմեր Նեֆիի գրական ժառանգությունն են կազմում թուրքերեն և ծավալով ավելի փոքր պարսկերեն երկու դիվանները, «Մադի նամե» (Մատովակի գիրք) պոեմը և երգիծական բանաստեղծությունների ժողովածուն, որը վերնագրված է «Ճակատագրի նետերը» (Սիհամե դագա): Նեֆին համարձակորեն իր երգիծանքի սլաքներն ուղղում է կայսրության մեծ վեզիրների, կաշառակեր դատավորների, կեղծավոր հոգևորականության դեմ, նույնիսկ ծաղրում է շեյխ-ուլ-իսլամին: Շատ հաճախ հեղինակը բացահայտ նշում է իր քննադատության թիրախներին իրենց իրական անուններով: Նրանցից էին մեծ վեզիր Գյուրջու Մեհմեդ փաշան, շեյխ ուլ իսլամ Մեհմեդ փաշան, Ահմեդ փաշան, վեզիր Էկմեկչիզադեն, Հաֆեզ Ահմեդ փաշան, Հալիլ փաշան, Քաֆոլուն, զինվորական դեֆթերդար Բաքին, քաղաքի կառավարիչներից Բահսի Էֆենդին և այլոք: Իր երգիծանքի սլաքներն ուղղելով անհատների դեմ և դիմակազերծելով վերջիններին՝ Նեֆին մեծ վարպետությամբ բացահայտում է ընդհանուր Օսմանյան կայսրության հասարակության մեջ արմատավորված արատավոր երևույթները: Հեղինակն իր քննադատության մեջ անողորք է և նաև պետության վիճակը պայմանավորում է անհատների սխալներով.

Vay ol devlete kim ola mürebbisi anın

Bir senin gibi deni cehli mücessem a köpek⁶²³...

⁶²² Стю Гарбузова В., Поэты средневековой Турции. Учебное пособие, Ленинград, 1963, стр 156.

⁶²³ Օմեր Նեֆիի «Ճակատագրի նետեր»-ը երգիծական ժողովածուից բերված օրինակները մեջբերված են Ե. Մաշտակովայի Թուրք գրականության սատիրայի և հումորի պատմությունից

Վայ այն պետությանը, եթե նրա խորհրդական դառնա
Քեզ նման ստորություն և սզիտություն մարմնավորողը, շուն...

Բանաստեղծի վերոհիշյալ խոսքերն ուղղված են մեծ վեզիր Գյուրջու Մեհմեդ փաշայի դեմ: Դիմակազերծելով ասելի վեզիրին՝ Նեֆին մեղադրում է վերջինիս բազմաթիվ անմեղ մարդկանց մահվան, ստի, կեղծիքի, ազահության և դաժանությունների մեջ և հավելում.

Vezaret kimdedir gör hey Nizamülmülk, hey Asaf

Olurmuş bir acüzeyle nizamı devletin fani⁶²⁴

Ով Նիզամուլմուլք, ով Ասաֆ, նայեք՝ ով է վեզիրի պաշտոնում

Երկար չի տևի պետության մեջ կայունությունը այդ անպիտանի պատճառով...

Նեֆին կտրուկ հարցադրումներ է անում արդարության և անարդարության, բարու և չարի շուրջ, այն կարևորի մասին, թե ինչը պետք է հաշվի առնել՝ գնահատելով իշխանության գլխին կանգնած մարդկանց գործունեությունը և բացահայտ ակնարկելով վեզիր Էկմեկչիզադե Ահմեդ փաշային՝ ասում է.

Adil ü zalimi bir görmek iken cürm-I azim

Yek görür zalimi ol bu nice iz'an olsun...

Մեծագույն մեղք է հավասարեցնել անարդարին արդարամտի հետ,

Իսկ նա նախընտրում է կեղեքիչին, ինչպես է հնարավոր...⁶²⁵

Կամ հետևյալ բեյթում՝

Ol sitem-pişe ki yanında beraber görünür

Nik ü bed cümle gerek küfr ile iman olsun⁶²⁶...

Այն բռնակալը, ում համար հավասարագոր են

Ե՛վ բարին, և՛ չարը, հավատացյալն ու անհավատը⁶²⁷...

Հավատարիմ մնալով իր շրջապատի և իր ժամանակի հայացքներին՝ Նեֆին հույսը դնում է սուլթանի բանականության ու արդարադատության վրա, որն իր իշխանությամբ պետք է պատժի մեղավորներին, վերացնի արատավոր երևույթները և հաստատի բարին:

աշխատության վերջում թուրքերեն տառադարձված օրինակներից: Steu Маштакова Е., Из истории сатиры и юмора в турецкой литературе /XIV-XVII вв/, Москва, 1972, стр. 218-227.

⁶²⁴ Маштакова Е., Из истории сатиры и юмора в турецкой литературе /XIV-XVII вв/, Москва, 1972, стр. 221, 4-րդ մաս, 2-րդ բեյթ:

⁶²⁵ Նույն տեղում, էջ 219, 2-րդ մաս, 6-րդ բեյթ:

⁶²⁶ Նույն տեղում, էջ 219, 2-րդ մաս, 8-րդ բեյթ:

⁶²⁷ Այստեղ հավանաբար հեղինակն ի նկատի ունի ազգությամբ ոչ թուրք բարձրաստիճան պաշտոնյաներին: Այն փաստը, որ ազգությամբ ոչ թուրք զբաղեցրել է նման բարձր պաշտոն, պոետի կողմից ընկալվում է իբրև հենց մեծ վեզիրի պաշտոնի վարկաբեկում: Սա ցույց է տալիս, որ այլամերժ, ազգայնամոլական տրամադրությունները տարածված էին միջնադարյան Օսմանյան կայսրության նույնիսկ ընդդիմադիր և առաջադեմ համարվող մտավորականության շրջանում:

Սուլթանը պետք է պաշտոնյաներին ընտրի համեստ և գիտակ մարդկանց շրջանում, իսկ անպիտան վեզիրներին անողոք պատժի.

Addolunsa eğer esbabı nizami devlet

Seni katleylemedir cümleden akdem a köpek⁶²⁸...

Եթե պետության մեջ փորձեր արվի կարգ ու կանոն հաստատել,

Ապա առաջնահերթ պետք է քեզ սպանել, շուն

Իր ստեղծագործություններում նա ստեղծում է իդեալական տիրակալի կերպար, որն իմաստուն է, անաչառ և քաջ: Սակայն այդ բոլոր հատկանիշները երբեմն վերագրելով իր ժամանակի սուլթաններին, Նեֆին ակնհայտորեն խեղաթյուրում է իրականությունը և անգամ պատերազմներին չմասնակցած կամ դրանցում պարտված սուլթանները ներկայացվում են քաջերի տեսքով: Չի բացառվում, որ այս կերպ ևս բանաստեղծը ցանկացել է ենթատեքստում քննադատել գործող սուլթաններին նրանց իրական կերպարներն անուղղակիորեն հակադրելով իդեալական տիրակալի կերպարի հետ:

Նեֆին մի կողմից ակնկալում է շարիաթի աջակցությունն օրինականության հաստատման գործում, մինչև նույն ժամանակ կշտամբում նաև հոգևորականներին, քանզի ըստ գրողի՝ շատ հաճախ հոգևորականի քողի ներքո թաքնվում են արատավոր մարդիկ: Այդպիսի կեղծ հոգևորականների մասին նա ասում է. «Նույնիսկ մուֆթիի ավանակը ավելի մոլլա է, քան նրա տերը, բայց վերջինս իրեն երևակայում է իբրև գիտակ մարդ»⁶²⁹:

Օմեր Նեֆիի երգիծանքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նա լայնորեն կիրառում է երգիծանքի ժանրում բավականին տարածված մի հնարք, երբ ծաղրում է մարդուն փառաբանման միջոցով, սակայն նա այնքան վարպետորեն է դա անում, որ ծաղրի ենթարկված անձը նույնիսկ չի էլ գուշակում թաքնված երգիծանքի մասին: Այդպիսի օրինակներից է Բահսի Էֆենդիին նվիրված տողերը.

Sana Bahsi Efendi sad tahsin

Görmedin bir senin gibi daver

Olalı şehre yine sen hakim

Kahbelik Nadiri tahallus eder⁶³⁰

Բահսի Էֆենդի, քեզ հազար փառք,

Քեզ նման կառավարիչ չեմ տեսել ես դեռ:

Այն պահից, երբ կրկին դարձար քաղաքի կառավարիչ,

Անառակությունն իր համար Նադիրի կեղծանունը վերցրեց...

Նեֆիի բանաստեղծություններում անընդհատ առկա են պալատում իրեն շրջապատող միջավայրի մասին բողոքները: Նա զանգատվում է, որ իր ճակատագիրը «նախանձից տառապելն է», որ «կյանքում երջանկություն էր փնտրում, բայց վաստակեց չարություն և նախանձ» և այժմ թշնամիների և հիմարների՝ «էշերի և շների» պատճառով հաճախ ստիպված է լինում չարախոսել: Փորձելով բացասական գույներով նկարագրել իր

⁶²⁸ Маштакова Е., նշված աշխ., էջ 221, 4-րդ մաս, 7-րդ բեյթ:

⁶²⁹ Նույն տեղում, էջ 222, 3-րդ մաս, 5-րդ բեյթ:

⁶³⁰ Նույն տեղում, էջ 224, 8-րդ մաս:

հերոսներին՝ նա հաճախ կիրառում է ժողովրդախոսակցական կոպիտ արտահայտություններ, նրանց համեմատում կենդանիների հետ և այս ամենի հետևանքով Նեֆիի պոեզիայում ի հայտ են գալիս գոեհկաբանություններ:

Իր անձնական թշնամիներից էլ Նեֆին պաշտպանվում է իր միակ զենքով՝ երգիծանքով, որը երբեմն վեր է ածվում սպանիչ ծաղրի՝ սարկազմի: Նա իր երգիծանքի մասին շոայլ գնահատականի խոսքեր է ասում, որը երբեմն հասնում է բացահայտ պարծենկոտության, ինչն էլ իր հերթին որոշակի ավանդությունների արտացոլումն է:

Küşte-i Zülfikar-ı hicvimdir,

Bir alay yave-guy-ı herze-tıraz

Kadir olmasalar cevaba nola

“Bes neyayed zi küştegan avaz”...⁶³¹

Իմ երգիծանքի անողոք սրից

Սպանվել են նրանք, ովքեր անհեթեթ ծաղրել են

Ինչ արած՝ չեն կարող նրանք /ինձ/ պատասխան տալ.

«Մահացածները լռում են»...

Օմեր Նեֆին «Ճակատագրի նետերը» պոեմի բեյթերից մեկում տրվելով ինքնագովեստի՝ արտահայտում է այն միտքը, թե իբրև սուլթան Օսման II-ը իր փառքի տարածման համար պարտական է հենց Նեֆիի բանաստեղծություններին.

Cihanı tuttu nazmımla seraser şöreti namı

Eğerçi hutbeden terkettiler sultanı Osmani⁶³²

Շնորհիվ իմ բանաստեղծությունների՝ ամբողջ աշխարհով սփռվեց նրա փառքը,

Թեպետև զրկեցին խութբայից⁶³³ սուլթան Օսմանին⁶³⁴:

Նշենք, որ բանաստեղծի համարձակ բացահայտումների թիրախ դարձած պաշտոնյաները չեն հապաղում պատասխան հարված հասցնել Նեֆիին. «Ճակատագրի նետերը» գրելու համար նա դառնում է բամբասանքների, խարդավանքների ու պարսավանքների զոհ և հեռացվում պալատական պաշտոնից: Որոշ ժամանակ անց Նեֆին արժանանում է սուլթան Մուրադ IV-ի ներմանը, սակայն վայր չդնելով գրիչը՝ երգիծական սուր քննադատական ստեղծագործության բացասական հերոս է դարձնում մեծ վեզիր Բայրամ փաշային: Մոլեգնած վեզիրը սուլթանից խնդրում է թույլտվություն Նեֆիին սպանելու համար, և ստանալով այն, Բայրամ փաշայի մարդիկ 1634 թվականին խեղդամահ են անում և ծովը նետում բանաստեղծին⁶³⁵: Սակայն իր թողած գրական ժառանգությամբ Օմեր Նեֆին լուրջ տեղ գրավեց միջնադարյան օսմանյան գրականության

⁶³¹ Նույն տեղում, էջ 227:

⁶³² Նույն տեղում, էջ 223, 5-դ մաս, 22-րդ բեյթ:

⁶³³ Իսլամում ուրբաթօրյա աղոթքի անվանումը:

⁶³⁴ Այստեղ հեղինակը նկատի ունի երիտասարդ սուլթան Օսմանի գահընկեցությունը:

⁶³⁵ Տե՛ս ԴարճոՅՈՅԱ Բ., նշված աշխ., էջ 157:

մեջ, իսկ նրա ստեղծագործությունները դարձան «երգիծանքի դարաշրջանի» կարևոր գեղարվեստական ձեռքբերումներից:

**О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ОСМАНСКОЙ САТИРИЧЕСКОЙ ЛИТЕРАТУРЫ XVII
ВЕКА (СБОРНИК ОМЕРА НЕФИ «СТРЕЛЫ СУДЬБЫ»)**

Лиана Акопян
(резюме)

Данная статья посвящена некоторым особенностям турецкой сатирической литературы, и, в частности, произведениям средневекового сатирика Омера Нефи. В ней представлено возникновение жанра сатиры в турецкой литературе, исторические события способствовавшие развитию этого жанра, основные причины, заставившие поэта писать острые сатиры в адрес знаменитых людей. В статье приведены примеры из сатирического сборника О. Нефи “Стрелы судьбы”, при помощи которых автор попытался дать оценку турецкой общественной жизни 17-ого века.